



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական Միության կողմից



ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԻԱՅՆԱԿ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՎԱԾ ԵՐԿԵՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ, ENPI/2013/334643

ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC)
ՀՈՒԼԻՍ 28, 2016, ԱՂՎԵՐԱՆ

1

ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԻԱՅՆԱԿ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ . ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆԸ
- ՏՊՍՍ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ
- ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ
- ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ
- ԾՐԱԳՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
- ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ
- ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՏՂՀԿ-ն Ծրագրի շրջանակներում իրականացնում է.

- Գյուղատնտեսության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտների պետական բյուջեների պարզեցումներ,
- Քաղաքականությունների շրջանակների վերլուծություններ,
- **Ընտրված բյուջետային ծրագրերի մոնիտորինգ և գնահատում,**
- ՔՀԿ-ների բյուջետային գրագիտության և վերլուծական կարողությունների բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

3

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընտրված բյուջետային ծրագրերն են.

1. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ծրագիր
2. Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ
3. **Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում (ներառյալ ՀՀ մարզերում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում ծրագիրը)**
4. Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ
5. Գյուղական խորհրդատվական ծառայություններ
6. Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին

4

ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քանակական և որակական հետազոտական մեթոդներ.

- Քաղաքականության փաստաթղթերի ուսումնասիրություն,
- Հարակից ուսումնասիրությունների և փաստաթղթերի ուսումնասիրություն,
- Հիմնական տեղեկացված անձանց հետ հարցազրույցներ,
- Ֆոքուս խմբային քննարկումներ,
- Շահառուների և ծառայություն մատուցողների ուսումնասիրություն և հարցազրույցներ,
- Վարչական, պաշտոնական տվյալների վերլուծություն,
- Վիճակագրական ընտրանքային հետազոտություն՝ ՏՊՍՍ-2016:

5

ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՏՊՍՍ-2016-ի ընտրանքային համակցություն և սպասվող սխալ

Կլաստերներ	Գլխավոր համակցություն		Ընտրանքային համակցություն , շահառու	Սպասվող սխալ, %
	Շահառու	Բաշխում		
Կլաստեր 1. ԱՀ ԲՀԿ	1,846	0.44	318	+/-5.0
Կլաստեր 2. ՏՀՍՍԿ ՊՈԱԿ	1,452	0.56	304	+/-5.0
Ընդամենը	3,298	1.00	622	+/-3.5

Աղբյուրը՝ ՏՁՀԿ

6

ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԻԱՅՆԱԿ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

7

ՏՊՍՍ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

- Ծրագրերը Հայաստանում տարեցների և հաշմանդամների խնամքին ուղղված կարևոր ծրագրերից են և համապատասխանում են սահմանված քաղաքականությունների գերակայություններին, հասարակության և շահառուների կարիքներին:
- Պետական քաղաքականության հիմնական նպատակն է միայնակ և խնամքի կարիք ունեցող տարեց, հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց **կյանքի որակի բարձրացումը**:
- Մատուցվող խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունները ներառում են կենցաղային սպասարկման, բժշկական, սոցիալ-հոգեբանական, իրավաբանական և այլ ծառայություններ:
- ՏՊՍՍ ծրագրերն ունեն շուրջ 3300 շահառու:
- Շահառուներ են հանդիսանում ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող չափահաս անձինք, որոնք չունեն խնամողներ և ունեն խնամքի և սոցիալական սպասարկման կարիք և ցանկություն:


8

ՏՊՍՍ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

- Շահառուները դասակարգվում են կենսագործունեության սահմանափակման 4 խմբերի (Ա, Բ, Գ և Դ)՝ յուրաքանչյուր խմբի համար նախատեսելով տնային այցելությունների և ծառայությունների համապատասխան փաթեթներ (*Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին N 730-Ն որոշում, 2007թ.*):
- Ծառայությունները մատուցվում են 2 կազմակերպությունների կողմից՝ երկու բյուջետային ծրագրերի շրջանակներում: Դրանք են՝
 - **Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում (ՏՀՍՍԿ ՊՈԱԿ),**
 - **ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում (ԱՀ ԲՀԿ):**
- Իրականացնող երկու կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների կառավարման մոդելները էականորեն տարբերվում են, որը թույլ չի տալիս գնահատել ծառայությունների մատուցման համեմատական արդյունավետությունը:

9


ՏՊՍՍ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՀԱՌՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, տոկոս



Աղբյուր՝ Ծառայություն մատուցող կազմակերպություններ


10

ՏՊԱՍ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, տոկոս




Աղբյուր Ծառայություն մատուցող կազմակերպություններ

ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2007-2016թթ., մլն դրամ



Աղբյուր ՀՀ 2016թ. պետական բյուջեի մասին օրենք, ՀՀ 2007-2015թթ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՏՀՀԿ հաշվարկներ

ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿՇԻՈՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐՈՒՄ, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ 2016թ. պետական բյուջեի մասին օրենք, ՀՀ 2007-2015թթ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՏՀՀԿ հաշվարկներ

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ և ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	2016	2017	2018	2020
	Բյուջե	ՄԺՄՄ		Անձնագիր
Շահառուների թվաքանակ, մարդ	3,952	3,952	3,952	3,952
Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում՝ ծրագրի շահառուներ	1,500	1,500	1,500	1,500
ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում սոցիալական սպասարկում ծրագրի շահառուներ	4,200	4,200	4,200	4,200
այդ թվում՝ տնային պայմաններում խնամքի ծառայությունների շահառուներ	2,452	2,452	2,452	2,452
Ֆինանսավորման ծավալ, մլն դրամ	361.9	351.0	361.9	368.5
Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում	147.2	142.9	147.2	145.4
ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում	214.7	215.3	214.7	223.1

Աղբյուր՝ ՀՀ 2016թ. պետական բյուջեի մասին օրենք, ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, «Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայություններ» ծրագրի անձնագիր, ՏՀՀԿ հաշվարկներ

ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

15


ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԸՍՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՅՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, տոկոս

	ԱՀԲՀԿ	ՏՀՄՄԿ	Ընդամենը
Հաշմանդամ	37.9	34.2	36.0
I խմբի հաշմանդամ	5.0	4.0	4.5
II խմբի հաշմանդամ	20.8	21.6	21.2
III խմբի հաշմանդամ	12.1	8.3	10.2
Կենսաթոշակատու	90.8	92.5	91.6
Կենսաթոշակատու հաշմանդամ	28.7	26.6	27.6
Ոչ կենսաթոշակատու հաշմանդամ	9.2	7.5	8.4
Միայնակ ապրող	65.3	52.0	58.5
75+ տարեկաններ	67.1	64.6	65.8
Միջին տարիք	76.3	75.3	75.8
Կին	84.2	75.4	79.7
Զավակներ չունեցող ՏՏ-ներ	54.4	47.0	50.8
Եկամտային օժանդակություն չունեցող ՏՏ-ներ	19.2	15.8	17.5
ՏՏ մեկ շնչի հաշվով միջին ամսական ծախս, դրամ	51,000	45,262	48,196
Շատ վատ և վատ կենցաղային պայմաններ ունեցող ՏՏ-ներ	52.2	53.0	52.6
Ծայրահեղ աղքատ և աղքատ ՏՏ-ներ		33.3	34.7

Աղբյուր՝ ՏՊՍՍ-2016, ՏՋՀԿ

16


ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍԵՌԱՏԱՐԻ ՔԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ, տոկոս



Աղբյուր՝ ՏՊՍՍ-2016, ՏՀԿ

17

ՏՏ-ՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, տոկոս




Աղբյուր՝ ՏՊՍՍ-2016, ՏՀԿ


18

ՏՏ-ՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԸ, տոկոս

Տան և կենցաղային պայմանների վերաբերյալ շահառուների սեփական գնահատականներ, տոկոս





Շահառուների սոցիալական վիճակի վերաբերյալ հարցազրուցավարների գնահատականներ, տոկոս



Աղբյուր՝ ՏՊՍԱ-2016, ՏՋՀԿ

19



ԶԱՎԱԿՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ, տոկոս



Աղբյուր՝ ՏՊՍԱ-2016, ՏՋՀԿ

20

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՋԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ, տոկոս



Աղբյուր՝ ՏՊԱՍ-2016, ՏՁՀԿ


ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՅԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ, տոկոս

	ԱՀ	ՏՀՄՄԿ	Ընդամենը
Կենցաղային սպասարկում	40.3	41.8	41.0
Բժշկական օգնություն և սպասարկում	93.7	97.4	95.5
Այլ աջակցություն	45.0	59.9	52.3


Աղբյուր՝ ՏՊՍՍ-2016, ՏՁՀԿ

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՅԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ, տոկոս




Աղբյուր՝ ՏՊՍՍ-2016, ՏՁՀԿ

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՅԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ, տոկոս



Աղբյուր՝ ՏՊՍՍ-2016, ՏՁՀԿ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՅԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ, տոկոս



Աղբյուր՝ ՏՊՍՍ-2016, ՏՁՀԿ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

27


ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

- Դիտարկենք մի քանի հիմնական հարցերի պատասխաններ. շահառուների որ խմբին (Ում) ինչ ծառայություններ են մատուցվել (Ինչ) և ինչ քանակությամբ են դրանք մատուցվել (Ինչքան):
- ԾՄ-ները շահառուներին պետք է մատուցեն ծառայությունների կոնկրետ տեսակներ՝ ապահովելով համապատասխան մասնագետների (սոցիալական սպասարկող, սոցիալական աշխատող, բուժքույր, բժիշկ և այլն) այցերի քանակը և պարբերականությունը:
- Չենք դիտարկել “սոցիալական աջակցության այլ ծառայություններ” մատուցող մասնագետների այցերի քանակը, ինչպես նաև չեն առանձնացվել սոցիալական աշխատողի և սոցիալական սպասարկողի այցերը, վերջիններս դիտարկվել են միասին:
- Եթե մասնագետների փաստացի այցելությունների քանակը սահմանված չափորոշիչների սահմաններում է, ապա ծառայությունը համարել ենք «լիարժեք մատուցված», եթե մատուցվել են նախատեսվածից ավելի քիչ քանակությամբ ծառայություններ, ապա «ոչ լիարժեք մատուցված», իսկ եթե ընդհանրապես չեն մատուցվել, ապա ծառայությունը համարվել է «չմատուցված»:
- Տարեցներին դասակարգել ենք խմբերի:

28


ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ, տոկոս

ՏՊՍՍ-2016 հետազոտության




ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ԱՏԱՅԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ, ՏՈԿՈՍ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԽՄԲՈՒՄ

Կենցաղային ծառայություններ ստացած շահառուների քանակը, տոկոս*



*- տոկոս Ա+Բ+Գ խմբերի շահառուների մեջ,

Բժշկական օգնության և սպասարկում ստացած շահառուների քանակը, տոկոս**



** - տոկոս բոլոր շահառուների մեջ


ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՂԻ ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՅՅԵՐԻ ՔԱՆԱԿԸ

	Միջին ամսական այցեր		Նվազագույն չափորոշիչ
	ԱՀԲՀԿ	ՏՀՍՍԿ	
Ա խումբ	3.2	3.0	16
Բ խումբ	4.1	4.8	8
Գ խումբ	2.3	2.0	4

Աղբյուր՝ ՏՏԱՍ-2016, ՏՁՀԿ, ՀՀ կառավարության «Մերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 730-Ն որոշում, 31 մայիս 2007 թվական

31


ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՂԻ ՄԱՏՈՒՅԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, տոկոս



Աղբյուր՝ ՏՊՍՍ-2016, ՏՁՀԿ

32


ԲԺՇԿԻ/ԲՈՒԺՔՐՈՋ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԱՅՅԵՐԻ ՔԱՆԱԿԻ, տոկոս



Աղբյուր՝ ՏՊՍՄ-2016, ՏՁՀԿ

33


ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԵՎԷ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉՍՏԱՑԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ, տոկոս



Աղբյուր՝ ՏՊՍՄ-2016, ՏՁՀԿ

34

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐԻՑ ՇԵՂՈՒՄՆԵՐ, տոկոս



Աղբյուր՝ ՏՊՄՄ-2016, ՏՁՀԿ

35

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՂՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇԸ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շահառուների սպասարկման հնարավոր տարբերակներ

	Ա խմբի շահառուներ անձ	Բ խմբի շահառուներ անձ	Գ խմբի շահառուներ անձ	Սոցիալական աշխատողի ընդամենը շաբաթական այցերի քանակ	Մասարկվող տարեցների թվաքանակ
Տարբերակ 1	4	0	0	20	4
Տարբերակ 2	3	2	1	20	6
Տարբերակ 3	3	1	3	20	7
Տարբերակ 4	3	0	5	20	8
Տարբերակ 5	2	5	0	20	7
Տարբերակ 6	2	4	2	20	8
Տարբերակ 7	2	3	4	20	9
.....
Տարբերակ 17	1	1	13	20	15
Տարբերակ 18	1	0	15	20	16
Տարբերակ 19	0	10	0	20	10
Տարբերակ 20	0	9	2	20	11
Տարբերակ 21	0	8	4	20	12
Տարբերակ 22	0	7	6	20	13
Տարբերակ 23	0	6	8	20	14
Տարբերակ 24	0	5	10	20	15
.....
Տարբերակ 29	0	0	18	20	20

Աղբյուր՝ ՏՁՀԿ

36

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՂՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

		Սոցիալական սպասարկողների քանակ			Անհրաժեշտ սոցիալական սպասարկողների քանակ	Անհրաժեշտ սոցիալական սպասարկողների քանակ
		(1,1,13)	(0,5,10)	(0,0,20)	1/15 գործակից այցը=2 ժամ	1/30 գործակից
ԱՀՔՀԿ	ԾՄ բաշխում	45	59	6	110	55
	ՏՋՀԿ բաշխում	73	7	21	102	56
ՏՀՄՄԿ	ԾՄ բաշխում	5	2	63	70	35
	ՏՋՀԿ բաշխում	79	9	2	89	44.5


Աղբյուր՝ ՏՋՀԿ

37

ԾՐԱԳՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ


38

ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԳՈՇՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ, տոկոս




Աղբյուր՝ ՏՊՄՄ-2016, ՏՁՀԿ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՅՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ, տոկոս



Աղբյուր՝ ՏՊՄՄ-2016, ՏՁՀԿ

ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԻՆ, տոկոս



Աղբյուր՝ ՏՊՄՄ-2016, ՏՁՀԿ

ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ

ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

«Մեամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայություններ»

Վերջնական արդյունքի ցուցանիշ
Կյանքի միջին տևողության բարձրացում
Ուղղակի արդյունքների ցուցանիշներ
ՄՕ02 Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում
<ul style="list-style-type: none"> • Սպասարկվողների թիվ, մարդ (եռամսյակային) • Վերացված թերությունների և խախտումների հարաբերությունը նախորդ տարվա ստուգումների (ուսումնասիրությունների, մոնիթորինգի) արդյունքում արձանագրված խախտումների և թերությունների նկատմամբ, տոկոս (տարեկան) • Դիմելուց հետո տնային սպասարկման մեջ ընդգրկվելու միջին ժամկետը, օր (մշտապես)
ՄՕ03 ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում
<ul style="list-style-type: none"> • Սպասարկվողների թիվ, մարդ (եռամսյակային)

Աղբյուրը՝ «Մեամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայություններ» ծրագրի նկարագիր

ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Վերջնական արդյունքի ցուցանիշ (տարբերակներ)
<ul style="list-style-type: none"> • Ծառայություն ստացող շահառուների կշիռը նման ընտանիքների ընդհանուր թվից (ցուցանիշի վավերացման աղբյուրը՝ ՀՀ ՄՎԾ ՏՏԿԱՀ, Մարդասնամար)
Ուղղակի արդյունքների ցուցանիշներ (տարբերակներ)
<ul style="list-style-type: none"> • Ծառայություն ստացող շահառուների և ՏՏ-ների թիվ (ցուցանիշի վավերացման աղբյուրը՝ ծառայություն մատուցող կազմակերպություններ) • Մեկ սոցիալական սպասարկողի կողմից սպասարկվող շահառուների թիվ ըստ սպասարկվողների խմբերի, մարդ • 75տ. բարձր տարիքի շահառուների կշիռը՝ սպասարկվողների ընդհանուր թվից • Միջին ամսական/շաբաթական այցերի քանակ • Կենցաղային սպասարկում ստացող շահառուների քանակ/կշիռ սպասարկվողների մեջ • Առաջնային առողջապահական ծառայություններ ստացող շահառուների քանակ/կշիռ սպասարկվողների մեջ • Սոցիալական աջակցության այլ ծառայություններ (ըստ ծառայությունների տեսակների) ստացող շահառուների քանակ/կշիռ սպասարկվողների մեջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

45

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը համապատասխանում է քաղաքականությունների գերակայություններին, հասարակության և շահառուների կարիքներին:

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ծրագրի շրջանակներում կենցաղային սպասարկման ծառայություններ են մատուցվել շահառուների 41 տոկոսին, բժշկական օգնություն և սպասարկում է տրամադրվել 96 տոկոսին և սոցիալական աջակցության այլ ծառայություններ են տրամադրվել 52 տոկոսին:

Տնային պայմաններում խնամքի ծառայություններ ստացած շահառուների 91.6 տոկոսը կենսաթոշակառուներ են, իսկ 36 տոկոսը՝ հաշմանդամներ: Շահառուների 66 տոկոսը 75 և ավելի ավագ տարիքի անձինք են:

Ծրագրերում ընդգրկված են հիմնականում ցածր եկամտային խմբերից շահառուներ: Շահառուների մոտ 59 տոկոսը բնակվում է միայնակ: Զավակներ չունեն շահառուների 51 տոկոսը:

Տնային պայմաններում խնամքի ծառայությունների ստացումն իրականացվել է շահառուների գոհունակության բարձր մակարդակում: Մատուցված խնամքի ծառայություններից շահառուների 32 տոկոսը «Գոհ» է, իսկ 31 տոկոսը՝ «Շատ գոհ»:

46

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Ծառայությունների մատուցման ամբողջականությունը բարելավման կարիք ունի:
Սոցիալական սպասարկողների ծառայությունները լիովին են մատուցվել
շահառուների միայն 27 տոկոսին, 39 տոկոսին այդ ծառայությունները մատուցվել
են մասամբ, իսկ 34 տոկոսին՝ չեն մատուցվել:

Բժշկի կամ բուժքրոջ կողմից ծառայություններ չեն մատուցվել շահառուների 3.4
տոկոսին:

Հետազոտությունում ընդգրկված Ծրագրի շահառուների 2.4 տոկոսը որևէ կարգի
խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ չի ստացել:

Հաճախ տնային պայմաններում խնամքի և սոցիալական սպասարկման
ծառայությունները սահմանափակվում են միայն բժշկական օգնության
ծառայությունների մատուցմամբ, որը գերազանցապես սահմանափակվում է
արյան ճնշումը չափելով և դեղեր տրամադրելով:

Ծառայություն մատուցող երկու կազմակերպությունների կողմից մատուցված
ծառայությունները դժվար համեմատելի են, քանի որ կառավարման մոդելները և
մատուցվող ծառայությունների կառուցվածքը բավականին տարբեր են:

47

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Հասարակության տեղեկացվածության մակարդակը Ծրագրերի մասին բարձր չէ:
Հայաստանի բոլոր ՏՏ-ների մոտ 59 տոկոսը տեղյակ չէ պետության կողմից նման
ծառայությունների մատուցման մասին:

Ցածր է նաև շահառուների տեղեկացվածության մակարդակը Ծրագրի
մանրամասնությունների, մասնավորապես՝ իրենց պայմանագրերի և անհատական
սոցիալական ծրագրերի մասին:

Պետություն կողմից ֆինանսավորման ծավալները բավականին փոքր են: Միևնույն
ժամանակ, սոցիալական սպասարկողների ծանրաբեռնվածությունը բավականաչափ
մեծ է:

Սահմանված կատարողական ցուցանիշները բավարար չեն ծրագրերի մոնիտորինգի և
գնահատման համար:

48

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերանայել բյուջետային ծրագրի կատարողական (ոչ ֆինանսական) ցուցանիշները՝ ընդգրկելով Ծրագրի շահառուներին և արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներ:

«ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում» ծրագիրը տարանջատել երկու առանձին ծրագրերի՝ համապատասխանաբար առանձին սահմանելով նաև կատարողական ցուցանիշները:

Ծրագրերի շահառուների հաշվառումն իրականացնել նաև ըստ ծառայություն ստացող ՏՏ-ների թվաքանակի:

Վերանայել տնային պայմաններում սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները: Մասնավորապես, սոցիալական սպասարկող/շահառու ծանրաբեռնվածության գործակիցը սահմանել ըստ շահառուների ԿՍԽ-ների: Ըստ այդմ տարբերակել նաև սոցիալական աշխատողների վարձատրության դրույքաչափերը:

Ծառայություն մատուցող կազմակերպությունների ֆինանսավորման հիմքում դնել ըստ ԿՍԽ-ների շահառուների թվաքանակը:

49

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ ԿՍԽ-ների սահմանել շահառուներին տրամադրվող նվազագույն ծառայությունների հաստատուն (հստակ) փաթեթներ՝ սահմանափակելով սոցիալական սպասարկողի և/կամ սոցիալական աշխատողի կողմից մատուցվող ծառայություններն ընտրելու հնարավորությունը:

Վերանայել տարեցների ԿՍԽ-ները: «Դ» ենթախումբը պետք է խիստ սահմանափակել կամ բացառել՝ այս խմբի շահառուներին առավելապես մատուցելով խմբային, ակումբային ծառայություններ:

Ըստ ԿՍԽ-ների շահառուների դասակարգման և հաշվառման վրա մեծ ուշադրություն դարձնել նվազեցնելով ծառայություն մատուցող կազմակերպությունների մասնակցությունը:

Ընդլայնել շահառուներին մատուցվող սոցիալական, մասնավորապես՝ կենցաղային սպասարկման ծառայությունների կշիռը:

Կատարելագործել սոցիալական աշխատողի ինստիտուտը՝ ապահովելով սոցիալական աշխատողների պարբերաբար վերապատրաստման և որակադրման գնահատման համակարգեր:

Ընդլայնել անկախ մոնիտորինգի և գնահատման դերը, ապահովել ծրագրերի կատարման և առաջընթացի վերաբերյալ պարբերական հաշվետվությունների, ներքին ու արտաքին գնահատումների, պաշտոնական մարմինների կողմից իրապարակվող նկարագրողական զեկույցների լայն հասանելիություն:

Լրացուցիչ ջանքեր ներդնել հասարակության տեղեկացվածության և շահառուների իրավունքների իրազեկման ուղղությամբ:

50

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



www.EDRC.am
info@edrc.am